

Մի զրուցէք (ինչպէս ձեր սովորութիւնն է ուրանալ և փախաւ սա սող երբ պատասխան չաւելիք) թէ ասանք առասպել են՝ և ազխապ պատմութիւնք, վասն զի Փարիզու արքեպիսկոպոս մը՝ Հայոց Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ յափշտակուած Պատրիարքը բանակէն չարչարելէն և բարոյապէս սղաննելէն վերջը, Փարիզու պէս մայրաքաղաքի մը մէջ քահանայ կը ձեռնադրէր։ Առասպել ձեր գրութիւններն են, որ Մարիաւս Թօփէնի դիւանական պատմութենէն վերջը գեո

երէկ 1872 ին (1) անարամիտ ըրաւ թեամբ Աւետիք Պատրիարքը կամաւոր ուխտաւոր և զընտելալ ապաշխարալ կը սրտամէք աշխարհի։

ՅԵՐԵՆՑ

Ա Ռ Ո Ղ Չ Ա Կ Ա Ն

(Շարունակութիւն • տես թիւ 5.)

Ասնք իրենց ջերմացուցիչ, գրգռիչ եւ չափողանց անուցիչ ըրութեամբ մարդուն բնական եւ հանգարտ աճումը կը փութացնեն, զանազան կիրքեր, մանուանդ ցանկութիւնը կը գրգռեն և շատ անգամ կենսական հիւթին ինքնիրեն հասուլուն առիթ կուտան, շատ անգամ ալ կը թեւադրեն զմարդ կրկի բռնութեամբ ամեն տեսակ անվայել և ահորէն ուժիրներ գործել, որովք ինչպէս շատ անգամ ըսի, մարմնը կը տկարանայ և այնուհետեւ կենթարկի ամեն տեսակ հիւանդութեանց եւ կը մատնուի տարածամ մահուան։ Այս ամենուն առաջին աանելու և այս չար հետեւանքէն ազատ մնալու առաջին և գլխաւոր դեղն է երկիւղածութիւնը ջերմեանդն աղօթքն և ճշմարիտ ու կատարեալ պահք։

ութեան, ուրիշ կեանք մը կը մոյժնին սնոր մէջ կամ թէ նոր աշխարհի կեանքի մը և սովորութեանց զանի կը յարմարենին, — Այլ երբեք, — Ի՞նչ եր ուրեմն — ճշմարիտ խօսեալով, շատ քիչ բանս Այս Երուսթաց միարամութիւնը գրիտառու ուսուցանելով ուրիշ բան չի ն ծածկեր, բայց եթէ անոր շարժարանները՝ ասնջանքները և Գողգոթան, Այս քրիտոնեայք խաչը միայն կուրանային «Չարչարանաց Քրիտոնոր խաչին վրայ ցուցնելու կամչնան» (այս է բողոքութեան ձեւը կարգիտաց ժողովին և ինտիկիտիտ ձ պատգին) • կամ թէ որ խաչը ի գործ ածելու ալ բրան, զանի կուսքերուն ստից տակ ծաղկիներու մէջ ծածկած կը դնեն, այնպէս որ կուսքը հասարակաց պաշտելու ժամանակ՝ պաշտամունքը օրինաւ պատգին այդ ծածկուած նութիւն համարուի։ Այսպիսի հնարապետութեամբ անթիւ ժողովուրդք և ինքնաբարութիւնը փաստել կը կարծեն։ Մարգրիտներու և գոհարներու երկրին մէջ այս բուրբուն օտար մարդիկը հրաշք ընել կը կարծեն հողիներ փաստելու համար՝ յողմող Քրիտոնու ցուցնելով Մոյ թագաւորներու ընծայներու մէջ, պահելով զճշմարտութիւնը, և զանի մը բան յայտնելու համար վերջը՝ երբոր գործը կատարեալ ըլլայ և մկրտութիւնը աւնուի։ Այդ յիմար ճամբէն՝ ուր կը մտորին, դարձնելու համար զերենք՝ պետք է հրովարտակ հրովարտակի վրայ, պատուիրանացիք պատուիրանագրի վրայ, կանգակ կանգակի վրայ, Թուղթերը բուսական չեն, պետք է որ Պապութիւնը անձամբ վրայ հասնի։ Գողգոթայի եկեղեցական մը՝ կարգիտեալ Թուրքնոն՝ կուզարկուի՝ այդ առանց խաչի՝ առանց Աւետարանի առանց շարժարանի քրիտոնութիւնը անձեկու համար, բայց հողիւ հասած (Հնգկատան), Կրու թիւց միարամութիւնը զներբանս նեակել կուտայ, և մարդք զարմանքն ու ցուեն կը մեռնի։

Միւսի՛ ի յեղութիւն։

(1) « Աւետիք Պատրիարքը 1705 ին աճունն « ձգուեցաւ և Տենեզու կղզին արտաբեցաւ, Բայց « անկէ փախչելով Գողգոթա գնաց և Մարտիտ քաւ « զարբ Գարուշին կրօնաւորաց քով կամուղիկեւ « կեղեցւոյ ծոցը՝ զղջմամբ մեռաւ »։ (Եկեղեցական պատմութիւն • 2 • Ա սրբան Ը ստեղծանց, էրես 400, տպագրեալ 1872.)

Այժմ ես կըլլեմ, և մեր բազմերախտ Աստուածարեւոյ սուրբ Գրիգոր լուսաւորիչ առաքելաշնորհ Հայրապետը թող խափ. թերեւս նորա և բախտիրը շարժե զձեզ և նորա հայրական խօսքերն համոզեն ձեր միտքը և իւր սիրովը յաղթահարէ ձեր կամքն ու կիրքերը :

— Գինին ու արքեպոսթիւնը, կըսէ, իմաստուն մարդիկներն ալ կ'ապականեն, հասար մտքով ու մարմնով անկատարներուն համար ի՛նչ ըսենք :

— “ Այս խրատու խօսքերը գինինն ու մեկն զգուշացնելու համար է, որովհետեւ գինին աւելի կը յխնարեցրնէ միտքը և գէտ ՚ի անառակութիւն կը դրդէ, մանաւանդ մանուկները, եւ մարմիններէն գիծութեան հասումը յառաջ կուգայ :

— “ Ինչպէս որ ջուրը ոչ միայն երկիրը կը ջրէ հապա կը սղոզէ և կը վնասէ, ասանկ ալ բոլոր դարմանները (ուտելք և խմելք) . ինչպէս իւզը, մեղրը, գինին և ուրիշ ասանկ բաները նոյնպէս կը վնասեն. ջափովը սընունդ ու դարման է, իսկ չափէն աւելին ասնջանք ու մահ :

— “ Արդարութիւնը պէտք է աճեցրնել սուրբ սիրով, և արաստու աղից աղօթքով . իսկ պահքով ալ պէտք է ցամքեցնել գիծութեան անդուսոյ հասումը որ անդամներուն ապականութիւնն է :

— “ Աղբիւրներուն ջրերը և անձրեւայ կաթիլները զգալի կրակը կը մարեն, իսկ առ Աստուած եղած սէրը և ջերմեռանդն արաստուքը մեզոց կրակը կը մարէ. մարմնոց կամքը և ինքնին շոշափմամբ դորձած աղտեղի շարժմանց հասումը (գիծութիւնը) կը խափանէ, և ուրիշ անգամ անանկ դարձելի ախտը դորձել չը տար, այլ մտքուր մտքով մարքութիւն կը ստանայ . որպէս զի

անորբութեան համար սահմանուած պատահարը չը գիտցած առուր և չը կարծած ժամու մէջ վերայ չը հասնի և այն շարութենէ յառաջ եկած վնասուց վրէժը չը լուծէ . բանցի սուրբեբու մէջ բնակող Տէրը սրբութիւն կը սիրէ, բայց անսուրբներուն համար կ'ըսէ, թէ Անոնց կրակը չը պիտի մուրի և անոնց որդը չը պիտի մեռնի և ամենուն առջև խոյստուակ պիտի լինին :

— “ Մեղի ալ պահք դրուելցաւ, որ հագին ու մարմինը մեղքի յոժարեցրնող անժուժկալութեան բոլոր վնասները կը խափանէ :

— “ Պահքը գիծութեան սղծութիւնը կը շորցնէ, ինչպէս որ նեխած երկիրը շորութեամբ (ջուր չըսեանալով) կը ցամքի, այսպէս ալ գիծութեան ախտով նեխած անձը պահքեղութիւն սրբուելով անուշահոտ եւ սուրբ կը լինի : Պահքը, թշնամոյն թերադրութեամբ՝ այս ախտին կրակովը վառուող մանկանց ցանկութեան բորբոքը կ'որգելէ :

— “ Որովհետեւ անխափ ուտել խմելը) կրակով բորբոքելու պէս կը վառէ և կարծարձէ ցանկութեան բուցը . կրակը մարմինը կայրէ, սակայն միսն ու գինին ցանկութիւնը շարժելով հողին կայրեն, արգ. թէ որ կրակը՝ վառելու նիւթ չունենալով կը մարի, ուրեմն ցանկութիւնն ալ պահքեղութեամբ կը շիջանի : Իսկ թէ որ մանկութիւնը առանց արգելքի ուտելու խմելու և դրօսանքի ետեւէ լինի թող չը յուսայ որ սրբութեամբ ոչ ջախտհ պիտի կրնայ լինիլ, այլ որովայնամուտութեան ցանկութիւնը ախտին կրակը վրան կը թափէ և գտածը կայրէ, եւ պատմութեան դատաստանը իրեն և իւր հետ հաղորդակից եղողներուն կը պատրաստէ : Այսբան պա-

տիժներ ունին որով սյեամողներն տարբեցողները, որ միշտ անար մէջ կը յորատուեն եւ կ'ապականեն իրենց անձը այս ակտիւն տեսակ տեսակ զապ բուժեամբը : Իսկ ձՇՄԱՐԻՏ ՊԱՀՔԸ հոգիէն ու մարմինէն կը հալածէ ամեն ցանկութիւն . . . » : (Յաճախագրութիւն) :

Մեր բաղձերախա իմաստուն Հայ բուսականն այս ճշմարիտ և անհերքելի խօսքերը ոչ միայն ճշմարիտ պահոց օգուտը կը բացատրեն և կ'ապացուցանեն, այլ նաև մեր մինչեւ ցարդ բաժնէրը կը հաստատեն. եթէ այս ամենը գործադրելու նպատակաւ ուշի ուշով քննէք անոնց իմաստը եւ խօսքերուն զօրութիւնը համեմատք, կը յուսամ որ ոչ ուրիշ յորդորի կարօտ չէք ըլլոր և մեծ օգուտ կրնաք քաղել :

Ես գիտեմ, որ ձեզմէ շատերը ձեր նիհ սրութեան և անզօրութեան պատճառ կը համարէք առատ և պարարտ կերակրոց պակասութիւնը . բայց կը սխալիք . քանզի այդ ձեր կարծիքը կարող են հերքել այն աշխատասէր աղքատներն որք բոլոր տարւոյն շրջանին մէջ հազիւ թէ քիչ անգամ մին երես կը տեսնեն . իսկ մեծ մասամբ կերածնին հոց, ընդեղէն, մրգեղէն, կաթնեղէն ու բանջարեղէն է . նմանապէս գիւղացուց այն մեծ մասը, որք աշխատասէր եւ ժուժկալ են . նորա առողջ եւ իրենց որդիքը կայրատա ու ժիր են : Իսկ գուք անոնցմէ լաւ սնունդ ունիք, այնու ամենայնիւ յաճախ հիւանդ և սկարէք . ուսկից յայտնի է, որ այդ չէ ձեր տկարութեան գլխաւոր պատճառը . այլ ձեզ սնուցանելու համար բարերար Նախախնամութեան սահմանած կենսական աղիւլ հիւժըր ձեր մէջ չը պահեն է : Ի՞նչ օգուտ պիտի տայ ձեզ շուայտութեամբ մի կողմէն ուսել խմիլը, երբ արտաքոց կարգի զօրանալով միւս կողմէն յաճախակի անխոհեմ

մտքար սպտակք ձեր սննդարար զօրութիւնք, որով կը մտայ միշտ նուազեալ : Իսկ եթէ խոհեմութեամբ վարուիք և տեղի չը տայք գիժութեան որ և իցէ կերպով հասուելուն, այն առտեն պարզ ու ստիպաւորանակ կերակուրներն ալ կարող են զձեզ խիստ կանոնաւոր կերպիւ սնուցանել, առողջ ու զօրաւոր մարմին կազմել եւ մտքերնիդ սուր պահել : « Ննութիւնը քիչով կը բաւականանայ . ցանկութիւնը բնաւ հերիք է չըսեր, քանզի որչափ աւելցնես, որչափ տաս, ցանկութիւնը չէ թէ կը մտրի, այլ առաւել եւս կը զայրանայ » :

Դարձեալ, յաճախ պարարտ կերակուրներով և փափկութեամբ մեծ ցող մանուկը երբ չէ սովորած շատ անգամ իւր ակտիւնը զապել եւ համբերել, մեծութեան հասակին մէջ օր կը գայ, որ նա չը կրնար դանել իւր ցանկացած կերակուրները, որով թէ գժգոհ և անհանգիստ կը լինի, և թէ այն ատեն պարզ կերակուրները արդարեւ չեն կարող ըստ բաւականին սնուցանել, քանզի մարմինը առաւել սնուցիչ կերակուրներու վարժուած է : Արեմն ՚ի մանկութենէ պէտք է սակաւ և պարզ կերակուրներով վարժեցրնէք ձեր մարմինը որ թէ առողջ լինիք և թէ ՚ի պատահել հարկին կարողանաք համբերել :

Այս առ թիւ չեմ գուրի այնպիսի բըժշկաց այն անխոհեմ հրահանգը, որ ամեն դէպքերու ենթակայ եղող մարդկութե՛ վիճակը և հիւանդին սովորական կեանքը առանց նկատողութեան անսահմանաբար կը պատուիրեն մեղէն ուսել, գինի կամ օղի խմել, կամ ծուխ ծխել եւ կամ ուրիշ անտուրբ բան մի գործածել . մանաւանդ ուսելի վատ կ'ընեն, երբ ձեզ նման մանուկներու կը պատուիրեն, որով ձեր ա-

պարզայ թշուառութեան պատճառ  
 կը դառնան : Քանզի ինչպէս ուրիշ  
 անգամ ըսի, այս ամենը զձեզ դրոշ-  
 ուելով անխոհեմաբար կը ձգեն զձեզ  
 զանազան մեղաց մէջ, որոցմէ յառաջ  
 կը դայ ջղային ամեն տեսակ դժնդակ  
 ախտեր, զորոնցն իսկ ամենէն ծարուար  
 բժիշկն ալ չէ կարող խապառ բժշկել,  
 այլ միայն կը դարմանէ տաանց զձեզ  
 նոյն ախտին կեղեքիչ ճիրաններէն բու-  
 ըրովին ազատել կարենալու : Մար-  
 դասէր, գթած և սուպրինի բժիշկը  
 նախ ամենէն ընտիր դեղ ու դարման՝  
 հիւանդութեան բուն պատճառը կը  
 տայ և անկէ կը զգուշացնէ հիւանդը,  
 և ապա արտաքին դարմաններու կը  
 դիմէ : շատ անգամ հիւանդը իւր ախ-  
 տին պատճառէն հրաժարեցնելով ու-  
 րիշ դարմանի ալ կարօտութիւն չը  
 մնար : Ամենէն գէշ ու մարդկային ա-  
 ռողութեան թշնամի են այն շահա-  
 մուլ բժիշկներն, որք կը պատուիրեն  
 անընդհատ, շարունակ մտնելն ուտել  
 և ուրիշ անսովոր բաներ գործածել,  
 քանզի այս կը նշանակէ որ գուք չ'ա-  
 ռողանայք և իրենք միշտ զձեզ դար-  
 մանեն : Աթէ պատուիրածը հիւան-  
 դութեան դեղ մի է, պէտք է որ ու-  
 րիշ գեղերու նման առողջանայէն վեր-  
 ջը գադարիք վայն գործածելէ : Քանի  
 որ ախտին պատճառը ձեր մէջն է,  
 բնաւ ոչ գեղ ոչ դարման և ոչ ուրիշ  
 բան մի օգուտ չըներ, վերցուր ախտին  
 պատճառը, և ահա՛ վերուցած կը լի-  
 նիս ախտը : հասպա ի՛նչ ըսենք այն բը-  
 ժիշկ անուան անարժան քանի մի հը-  
 բեշներուն, որք միտանակ վախճուոր  
 իւր միջութենէն ետ կեցնելու և ա-  
 զատելու, աւելի առ այն կը յորդորեն  
 զանազան իմաստակութիւններ ընելով  
 և անարժան միջոցներ ցոյց տալով :

Աթէ ուշադիր մտօք և ձեր անձին  
 օգուտը ճանչնալով հնազանդութեամբ

կարգօք և գործադրելու կոմք ունե-  
 նաք, կարծեմ զձեզ համոզելու համար  
 այսչափ խօսք հերիք է, տեսնե՛ք ու-  
 թեմն երկրորդ դարմանն ու իւր օ-  
 գուաները :

Թ՛.

2. — Արիւղաճութեան հետ մեծ  
 կապալցու թիւն ունի շարունակ ՅԻՇԱ-  
 ՏԱԿԵԼ, ԿՐԻՑ ՈՒ ՄՈՂՈՒԹԵԱՆՑ ՉԱՐ  
 ՀԵՏԵԻԱՆՔԸ և զղուիլ անոնցմէ . յիշել  
 ՄԱՀԸ որ ամենուն կ'իշխէ և չը ըս-  
 պասեր որ մեք պատրաստ գտնուինք,  
 այլ անակնկալ ժամանակի մէջ կը հաս-  
 նի մեր վերայ և մեր բոլոր խորհուրդ-  
 ները կը ջնջէ, ուրեմն յիշելով մահը՝  
 պէտք է միշտ մեղքերէ հեռանալով  
 և ազատ մնալով հակաաւորողին ծա-  
 ուցութենէն պատրաստ գտնուինք :  
 Յիշել ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՏԱՏԱՆԸ որ ար-  
 դարութեան օրինօք անհրաժեշտ կը  
 սպասէ մեզ՝ տրդար ու անաչառ դա-  
 տաւորի մը ձեռքը գատուելու և ա-  
 մեն մէկն իւր գործոց համեմատ յա-  
 ռիտեական վարձք կամ պատիժ ըս-  
 տանալու :

Մեղքի և մղութենէ հրաժարելու  
 համար ջերմեռանդն զըմտաբար այս յի-  
 շատակները մեծ օգուտ կը մատակա-  
 րարեն : Մեղքի հետեւանաց, մեղքին  
 յառաջ եկած վնասներուն վերայ տը-  
 գէն բաւականի չափ խօսեցայ հիմա  
 ձեզ կը մնայ անոնց վերայ խորհիլ եւ  
 տեսնել թէ այդչափ վնասներով լե-  
 ցուն գործի մը շարութիւնը հասկնա-  
 լին վերջը նորէն զայն գործելը սրչափ  
 անմտութիւն և յիմարութիւն է : Երբ  
 դուք այս վնասներն ՚միտք առնուք,  
 միշտ սոսկալով զանոնք յիշէք, հար-  
 կաւ պէտք է զգուշանայք եւ հեռա-

նաք անոնցմէ . եթէ ձեր բանական  
 դատողութիւնը այսպէս չընէ , այն ա-  
 տին անբան կենդանիներն զձեզ պիտի  
 յանդիմանեն եւ դուք բանականու-  
 թեան մեծ պատիւը կորուսանելով ա-  
 նոնցմէ ստորին պիտի սեպուիք . քան  
 զի անբան կենդանիներն անգամ իրենց  
 վտանգաւոր եղած բաներէն կը դու-  
 շանան , միանգամ իրենց վնասուած  
 բանէն կամ տեղէն սարսափով կը հե-  
 ռանան . միթէ դուք անոնցմէ աւելի  
 վատթար լինելը , անարգ սեպուիլը  
 յանձնառու կ'ըլլա՞ք , շարունակ խնա-  
 րով այն վտանգաց մէջ , որոց վնասը  
 ճանցոյք եւ գիտցոյք : Յիշել յանցան-  
 քը զըջմամբ եւ ցաւելով՝ նշան է  
 որ ուրիշ անգամ զայն գործելէ ըզ-  
 դուշանալ կուզէք . իսկ ընդհակառա-  
 կըն առաջին անգամ գործած յան-  
 ցանքը մոռացողը կամ յանցանքն յի-  
 շելով զուարճութիւն զգացողը կը ըս-  
 կըսի նորէն կրկին եւ կրկին յանցանք  
 գործել , եւ ասոր համար է որ ուղ-  
 զուիլը դժուարին եւ երբեմն ալ անհը-  
 նարին կը լինի , ուրեմն նորէն չը մե-  
 զանելու համար պարտաւոր է մարդ  
 յանցանքին գէշութիւնը ճանչնայ եւ  
 միշտ զայն յիշէ զըզանօք եւ ցաւօք .  
 նաեւ ուրիշներուն վերայ տեսած պա-  
 կասութիւններն ալ պէտք է ատէ ,  
 պժգայ անոնցմէ եւ երկիւղիւ հեռա-  
 նայ . ինչու որ ուրիշներուն սխալն  
 քովն ալ պէտք եմք շտկուիլ . սոգասե-  
 լու չեմք որ ամեն սխալմունք մեր գըլ-  
 խէն անցնի որ խրատուինք :

Այս կարգին մէջ հարկ կը համա-  
 րիմ յիշել նաեւ անկեղծ խոստովանու-  
 թիւնը , որ մեծ օգուտ կ'ընէ չը մե-  
 զանելու : Մեծ պարտք մի է մեզ  
 ճշմարիտ խոստովանութիւնը . բայց  
 խոստովանիլ պէտք է այնպիսի մէկուն ,  
 որ կարող լինի զմեզ ազատել մեր ցա-  
 ւէն , խրատել եւ զգուշացնել մեր վը-

տանգաւոր ընթացքէն եւ առաջնոր-  
 դել զմեզ ի բարութիւն եւ ի սրբու-  
 թիւն : Շատ անգամ անխոհիմ եւ  
 ագէտ մարդկան պատմելով մեր յան-  
 ցանքը կարող եմք ալ աւելի վնա-  
 սուիլ , եւ մեր սխալանոց մէջ հաս-  
 տատուիլ :

Իրաւ որ « Յանցանքը խոստովանի-  
 լը գեղեցիկ առաքինութիւն է » . բայց  
 ոչ թէ ըբութեամբ խեղիատակու-  
 թեամբ եւ յանցանքին վերայ յօժա-  
 րամիտ լինելով . այլ պատկասանօք ,  
 ամօթխածութեամբ , ցաւելով , սրբ-  
 տանց զըջալով , ուղղուելով եւ ուրիշ  
 անգամ յանցանք չը գործելու հաս-  
 տատ առաջադրութեամբ պէտք է լի-  
 նի խոստովանութիւնը : Ասոր համար  
 է որ Իմաստունը կ'ըսէ . « Մեզքդ քա-  
 ւելու համար առանց արտմութեան  
 մի կենար . մեզք մեղքի վերայ մի ա-  
 ւելցնէր՝ ըսելով թէ Տիրոջ գթու-  
 թիւնը մեծ է : Տիրոջ դառնալը մի  
 ուշացնէր եւ օրէ օր մի ձգէր , ինչու  
 որ նորա բարկութիւնը յանկարծակի  
 կուգայ : Բնաւ ոչ մի կերպով ճշմար-  
 տութեան դէմ մի խօսիր . քու ագի-  
 տութեանդ եւ ստութեանդ համար  
 աճցիր ու չէ թէ մեզքդ խոստովա-  
 նելու համար , քու անձիդ համար  
 ճշմարիտն ըսելու մի ամաչէր . ինչու  
 որ ամօթ կայ որ մեզք կը բերէ , ա-  
 մօթ ալ կայ որ շնորհք ու փառք կը  
 բերէ , դու զբեզ մի արդարացներ  
 Աստուծոյ առջեւ , ինչու որ մարդկան  
 սիրտը ճանցողն Ինքն է » :

Արդէն յանցանքը խոստովանելուն  
 ընութիւնն այն է , որ կը նշանակէ ցա-  
 ւիլ ըրածին վերայ եւ ալ չընել խոս-  
 տանալ . այս պատճառաւ է որ մեզի  
 գէմ յանցանք գործողն ալ երբ իւր  
 ըրածին պակասութիւնը ճանչնալով  
 կը խոստովանի եւ ներումն կը խնդրէ ,  
 սրտերնիս կը քաղցրանայ եւ կը ներենք :

Վասն զի կը համոզուինք որ այլ եւս չը պիտի մեղանչէ : Ըսել է որ անկեղծ խոստովանութեան հետ կապուած է արտի փոփոխութիւնը և նորոգութիւն, որով անցեալ յանցանքները կը զղջայ և կը հրաժարի անոնցմէ և կառաջագրէ վերստին չը մեղանչել :

Մահուան յիշատակը միշտ մեր մտաց մէջ ունենալը չը մեղանչելու պատճառ է . վասն զի մահը մեր բոլոր գործոց և հեշտութեանց վախճանն է . մահը անհրաժեշտ է մեզ որով կը փոխադրուինք այս անցաւոր կեանքէն դէպ ՚ի յաւիտենական կեանքը , ուր ամեն բան վերջ չունի : Արդ եթէ մեզաց ճանքով հոն անցնինք , որ թշուառութեան տանող ճանապարհն է , յաւիտենական , վերջ չունեցող թշուառութեան պիտի մտնուինք . իսկ եթէ սրբութեան ու մարգարութեան ճանքով գերեզմանէն անդին անցնինք , որ յերջանկութիւն տանող ճանապարհն է , յաւիտենականապէս երջանիկ պիտի լինինք . ուրեմն յիշելով մահը՝ յիշած կը լինինք մեր մեղքը և մեր յաւիտենական կեանքը եւ եթէ մեր բանականութիւնը արթուն է , անշուշտ այս յիշատակութեամբ պիտի պատրաստենք մեր անձը որ արժանի ըլլանք երջանիկ կենաց . պիտի պատրաստուինք ըստ ամենայնի անանկ՝ որ երկիւղ կամ նոր պատրաստութեան հոգ մը չունենանք մահուան հասած վայրկենին . այլ մեր այս ճանապարհորդութեան ամեն պատրաստութիւնն ունեցած ըլլանք . առաքինութեամբ և սրբութեամբ ճախանալով բնաւ բանի մը կարօտութիւն չունենանք :

(Շարունակելու :)

### ԱՌ ԶԱՄՈՒՌՆԵԱՆ

Վարդացինք ձեր գրածը Հայրենիք մէջ եւ ահաւասիկ համառօտիւ կը պատասխանեմք :

Մեր գրածը ըստ ձեր ասութեան կէ՛մ քաչար կէ՛մ քա՛ւր-լ չաչար տեսակէն է եղեր . ինչ որ ձեզ ըսել վայել էր , մեզ կ'ասէք . հոգ չէ , զի այդ՝ փաստ չունեցողներու համար բնական է : Թէ՛ մեր և թէ՛ ձեր գրածներն հրատարակի վերայ կեցած են . որջամիտ ընթերցողը կարող է դատաստան առնել մեր՝ թէ՛ ձեր գրածներն կէ՛մ քաչար կէ՛մ քա՛ւր-լ չաչար տեսակէն է : Բուն ինդիլին էր (ձեր կողմէն եղած) Նիկիոյ Ե . Ժողովը Տիեզերական ժողով է , մէք ՚ի պատասխանի ասած էինք թէ՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ համար Ե . Տիեզերական ժողով չը կայ . նա միայն երբք Տիեզերական ժողով կ'ընդունի : Գուք փոխանակ ձեր ըսածը հիմաւոր փաստերով հաստատելու , ելքք առանց փաստի և առանց սպացոյցի պնդեցիք թէ Հայոց Եկեղեցւոյն համար Ե . Տիեզերական ժողով է Նիկիոյ ժողովը և Յայսմաուրբէն նշանակութիւն չունեցող ինքնահնար վկայութիւն բերիք , եւ որպէս զի ինդիլին ծածկէք , Քաղկեդոնի ժողով մի մէջ ձգեցիք և անոր դաւանութեան վերայ մեզ հարցում ուղղեցիք առանց յիշելու ՚ի վաղ ժամանակաց Հայաստանեայց Եկեղեցւոյ Քաղկեդոնի մասին տուած վճիռը և առանց Նիկիոյ Ե . Ժողովոյ մասին մեր գրածին պատասխանելու : Գուք որչափ ալ խոյս տալ ուղէք բուն ինդիլին , մէք դարձեալ հոն դառնալով՝ մեր ասածը կ'երեքնենք թէ՛ մեր Եկեղեցւոյ համար բաց ՚ի երբք Տիեզերական Ս . Ժողովներէն ուրիշ Տիեզերական մը չը կայ , և թէ՛ Նիկիոյ Ե . Ժողովը Տիեզերա-